

սենից Հմայեակ, տերն Աբեղենից Գազրիկ, տերն Առաւելենից Փափագ¹, Վրէն Զիւնական: 6 Այսոքիկ² ամենեքեան աւագ տանուտեարք, հանդերձ աւագ սեպիաւք եւ բարեպաշտ եպիսկոպոսաւք եւ աւագ քահանայիւք³ եւ վանականաւք, պատասխանի հրովարտակին⁴ գրէին առ թագաւորն Յազկերտ եւ առ ամենայն աւագանին դրանն այսպէս.-

ԻԴ. «Ի լուսաւոր եւ ի ճշմարիտ աւրբնս մեր գրեալ է, որ ձեր ընդունայնութիւն եւ բարբանջմունք թուին, թէ *Ծառայք, հնազանդ լերուք մարմնաւոր տերանց ձերոց՝ որպէս Աստուծոյ*^ա. եւ մեր ըստ կարի զաւրութեան մերոյ երկուցեալ նախ ի հրամանէ աւրինաց մերոց, եւ ապա ի ձեր ի մեծ⁵ թագաւորութենէդ, եղեալ ի մտի՝ ոչ միայն ըստ երկիւղի մարդկան, որպէս առ ականէ, ըստ աւրինի չար ծառայից ծառայել ձեզ, այլ կամաւ իսկ եւ յաւժարութեամբ՝ յամենայնի զձեր կամս եւ զհրաման կատարել. եւ ծառայել ձեզ ոչ միայն կարասւոյ ծախիւք, այլ եւ զարին անձանց մերոց եւ որդւոց ի վերայ ձեր⁶ դնել: 2 Բայց վասն հոգւոց մերոց գիւտի եւ կամ կորստեան՝ զձեզ ինչ ամենեւին այդ հոգ մի՛ աշխատեսցէ: 3 Եւ վասն պարգեւի եւ պատուհասի որ երկնչիքդ յաստուածոցդ յաղագս մերոյ ոգւոց⁷, որպէս ասեքդ՝ ի մեր անձինս եւ յոգիս հասցէ յԱստուծոյ աւգուտն այն եւ կամ պատիժ: 4 Բայց դուք զիրսդ եւեթ զայդ լռեալ ներեցէք մեզ. քանզի որպէս անհնար է մարդկային բնութեանց փոխել զերկնից տեսչութիւնն յայլ տեսութիւն՝ նոյնպէս եւ անհնար է՝ որ ի բնէ ուսեալ եմք եւ հաստատեալ յաւրբնս յայս՝ անսալ այդպիսի հրամանի եւ հաւանել. զոր եւ լոկ բանիւք անգամ լսել ոչ կարեմք, քանզի եւ կամիմք իսկ ոչ:

5 «Այլ վասն աւրինաց ձերոց, զոր գրեալ էր եւ տուեալ բերել առ մեզ՝ մեք ձեզ ոչ երբեք լսեմք: 6 Մինչ որ⁸ այդր լինիմք ի դրանն, եւ կամ ի մոգուցդ, որ ձեր աւրենսուսոյցքդ⁹ իմն կոչին, այսպն արարեալ արհամարհեմք. թող թէ եւ գրոց եւս յաւժարեցուցանէք զմեզ կարդալ եւ լսել, որ ինչ ոչ է մեզ պիտոյ եւ ինդիր: 7 Այլ յառաւել եւս պատուելոյ զթագաւորութիւնդ ձեր՝ եւ բանալ անգամ զգրեալսդ եւ կամ տեսանել¹⁰ ոչ կամեցաք. զի զաւրբնս, զոր ճանա-

1 ՁԱտ. փապագ

2 Ձ. այսոք

3 Ձ. քահանայք

4 Ձ. լուսանցբում՝ պատասխանի թղթին այսպէս

ա Կող. Գ 22

5 ՁԱտ. ի մեծի

6 ԲԳտ. չիք ձեր

7 ՁՏՏ. յաղագս սիրոյ ոգւոց

8 Ձ. մինչ-ի վերեւից գրած՝ որ

9 ՁԱտ. օրենսւոյցքդ

10 ՏՏ. զգրեալսդ կամ տեսանել